ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՏՆՕՐԵՆ Վ. ՍԱՀԱԿՅԱՆ

_______________

01 09 2022թ.

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

# 2022-2023 ՈՒՍՏԱՐԻ

## ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

| № | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | 2022-2023 ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքներ<br>ա) տոնական տեսքի բերել դասարանները,դպրոցը<br>բ) նախապատրաստվել I զանգ արարողությանը | սեպտեմբեր | Տնօրեն<br>ՄԿԱ գծով փոխտնօրեն<br>ԴԱԿ | |
| 2 | Նոր նշանակված դասղեկների հետ մեթոդական աջակցության տրամադրում դասարանական և աշակերտական խորհուրդների ձևավորման գործում | սեպտեմբեր | Տնօրեն<br>ՄԿԱ գծով փոխտնօրեն<br>ԴԱԿ | |
| 3 | Պահպանել կանոնադրությամբ,ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները: | ուստարվա ընթացքում | ՄԿԱ գծով փոխտնօրեն<br>ԴԱԿ | |
| 4 | Աշակերտական ինքնավարություն մարմինների կարողությունների զարգացման համար կազմակերպել **/առցանց եղանակով/** սովորողների, հատկապես աշակերտական խորհուրդների անդամների և դպրոցական ակտիվի համար ուսուցում հետևյալ թեմաներով՝ Աշակերտական խորհրդի ձևավորում Աշակերտական խորհրդի հանձնախմբերի և աշակերտական բազմաբնույթ ակումբների ձևավորում,վերջիններիս աշխատանքների պլանավորում և իրականացում :Միջոցառումների պլանավորում, գնահատում, հաշվետվության պատրաստում: Համայնքային նախագծերի ստեղծում և իրականացում և այլն: | սեպտեմբեր | ՄԿԱ գծով փոխտնօրեն<br>ԴԱԿ<br>ԱԽ | |
| 5 | Կատարել ամենօրյա հաճախումների հաշվառում | ուստարվա ընթացքում | ՄԿԱ գծով փոխտնօրեն<br>ԴԱԿ<br>, ԲՄ թիմ | |
| 6 | Մասնակցել ԿԱՊԿՈՒ երեխաների կրթություն ստանալու իրավունքի իրականացմանը:<br>Ստեղծել ԿԱՊԿՈՒ սովորողների անվանացանկը,նրանց ԱՈՒՊ-ները /անհատական ուսումնական պլանները/:<br>Վերահսկել այդ երեխաների կրթության կազմակերպումը՝ ըստ պլաններում նշված ժամանակացույցի: | ուստարվա ընթացքում | ՄԿԱ գծով փոխտնօրեն<br>ԴԱԿ , ԲՄ թիմ | |
| 7 | <<Ներառական կրթություն. Կրթություն | ուստարվա | ՄԿԱ գծով | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | բոլորի համար>> թեմայով: Համագործակցել Արթիկի մանկավարժահոգեբանական գնահատման կենտրոնի մասնագետների հետ: | ընթացքում | փոխտնօրեն ԴԱԿ , ԲՄ թիմ | |
| 8 | ՄԿԱ փոխտնօրենի հետ անցկացնել դասղեկների խորհրդակցություն և օգնել դասղեկներին կազմելու դասղեկական աշխատանքների պլանները և ներկայացնել հաստատման: | սեպտեմբեր | ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ | |
| 9 | ՄԿԱ փոխտնօրենի հետ նախապատրաստել և անցկացնել ծնողական հաշվետու ընտրական ժողովներ: | սեպտեմբեր | ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ | |
| 10 | Կատարել միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաների հաշվառում, հնարավորության սահմաններում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին ապահովել դասագրքերով և գրենական պիտույքներով: | սեպտեմբեր | ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ , ԲՄ թիմ | |
| 11 | Կազմել աշակերտների հերթապահության գրաֆիկը | սեպտեմբեր | ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ | |
| 12 | Ձևավորել դասարանների աշակերտական խորհուրդները: | սեպտեմբեր | ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ | |
| 13 | Կոմպլեկտավորել դպրոցի աշակերտական ինքնավարության դասարանային մարմինները և աշակերտական ինքնավարության գործադիր մարմինը՝ աշակերտական խորհուրդը | սեպտեմբեր | ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ | |
| 14 | Մասնակցել դասղեկի ժամերին և նպաստել երեխաների բազմակողմանի դաստիարակության և մանկական առողջ կոլեկտիվի ձևավորմանը: | ուստարվա ընթացքում | ԴԱԿ | |
| 15 | Կազմակերպել և անցկացնել ընդհանուր աշակերտական ժողով, ծանոթացնել նրանց աշակերտի վարքի կանոններին: | սեպտեմբեր | ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ | |
| 16 | Աշխատանք տանել սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ, աջակցել դպրոցական ինքնավարությանը, հասարակական վերահսկողությանը: | ընթացիկ | ԴԱԿ | |
| 17 | .Ընտրել և հաստատել աշխորհի կազմը<br>❖ Ընդունել աշխորհի կանոնադրությունը | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ❖ Նախագահի ընտրություն | | | |
| 18 | Օգնել ԱԽ-ի աշխատանքները կանոնակարգող և կազմակերպող հանձնախմբերին՝ իրենց տարեկան աշխատանքային պլանը կազմելու: | սեպտեմբեր | ԴԱԿ | |
| 19 | Աշակերտական խորհրդի և դասղեկների օգնությամբ ձևավորել դասարաններն ու միջանցքները, ստեղծել վահանակներ: | սեպտեմբեր | ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ դասղեկներ | |
| 20 | Հետևել դպրոցի կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջների կատարմանը: | մշտապես | Տնօրեն, ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ | |
| 21 | Դասալսումների անցկացնում՝ ուշադրություն դարձնելով աշակերտների վարքի կուլտուրային: | ուստարվա ընթացքում | ԴԱԿ | |
| 22 | Հետևել և աջակցել դպրոցի միջանցքներում ու բակում դասմիջոցներին աշակերտական խորհրդի կողմից կատարվող հերթապահությանը: | մշտապես | ԴԱԿ ԱԽ | |
| 23 | Համագործակցել դասղեկների հետ և կազմակերպել սովորողների դաստիարակչական, արտադասարանական, արտադպրոցական աշխատանքները: | ընթացիկ | Դասղեկներ, ԴԱԿ | |
| 24 | Մասնակցել դպրոցի և սովորողի ընտանիքի սերտ կապի և համագործակցության ապահովմանը: | ընթացիկ | ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ դասղեկներ, Ծ/Խ ,սոց.մանկավարժ | |
| 25 | Խիստ հսկողություն սահմանել սիստեմատիկ ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմամբ, ժամանակին կանխել դրանք, այդ մասին նշումներ կատարել աշակերտների էլեկտրոնային և սովորական օրագրերում: | մշտապես | ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ | |
| 26 | Շարունակական հսկողություն երեխաների նկատմամբ ծնողների կողմից անհրաժեշտ խնամքի և դաստիարակության իրականացմանը: | մշտապես | ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ | |
| 27 | Հետևել աշակերտների գործունեությանը դասերի ժամանակ և դասերից դուրս: | մշտապես | ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ | |
| 28 | Ուսումնասիրել սանհիգիենիկ պահպանման վիճակը, ինքնասպասարկման | Ամիսը մեկ | ԴԱԿ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | պայմաններում՝ 6-9-րդդասարաններում: | անգամ | Դասղեկներ Բուժքույր | |
| 29 | ՄԿԱ փոխտնօրեն, ղեկավարությամբ կազմակերպել սովորողների հանգիստն ու ժամանցը, միջոցներ ձեռնարկել սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցույց տալու համար: | ընթացիկ | ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ | |
| 30 | Օգնել ներառական կրթություն իրականացնող բազմամասնագիտական թիմին ընդհանուր անհատական աշխատանքային գրաֆիկը կազմելուն: | ընթացիկ | ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ | |
| 31 | Համագործակցելով բազմամասնագիտական խմբի մյուս անդամների հետ՝ ուսումնասիրել աշակերտների կյանքի պայմանները, ընտանիքի առանձնահատկությունները, ընտանեկան փոխհարաբերությունների ազդեցությունը աշակերտի վրա, նրա սոցիալական միջավայրը, շփումները, հետաքրքրությունները, հաղորդակցման դժվարությունները: | ընթացիկ | ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ Բազմամասնագիտական թիմ, ծնողներ, դասղեկներ | |
| 32 | Աշակերտների բացակայությունների և ընթացիկ առաջադիմության վերլուծություն: Համապատասխան աշխատանք իրավիճակը բարելավելու ուղղությամբ: | ընթացիկ | ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ, ծնողներ, դասղեկներ | |
| 33 | Կատարել անցանկալի վարք ցուցաբերող երեխաների հաշվառում և անցանկալի վարքի պատճառների ուսումնասիրություն,ինչպես նաև համապատասխան աշխատանքի պլանավորում | ըստ անհրաժեշտության | ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ ,դասղեկ, սոցիալական մանկավարժ, հոգեբան, ծնող | |
| 34 | Դասղեկների հետ միասին հայտարարել թեմատիկ շաբաթներ,<<Մասնագիտական կողմնորոշում>>,<<Բնապահպանություն և կայուն զարգացում>>,<<Մեդիա գրագիտություն>>,<<Հանդուրժողականություն>>,<<Ինքնագնահատում>> և այլ թեմաներով: | պարբերաբար | ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ ,դասղեկներ | |
| 35 | Պահանջել դասղեկներից ուշադրության կենտրոնում պահել ԿԱՊԿՈՒ երեխաներին և ներգրավել միջոցառումներին: | մշտապես | ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ | |
| 36 | Ուժեղացնել վերահսկողությունը դպրոցի ընդհանուր կարգապահական աշխատանքների կազմակերպման ուղղությամբ: | ուստարվա ընթացքում | ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 37 | Սովորողների ֆիզիկական դաստիարակության բարելավման նպատակով կազմակերպել միջդասարանական միջոցառումներ՝սպորտլանդիաներ: | ընթացիկ | ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ ,դասղեկներ,ֆիզ. ուսուցիչ | |
| 38 | Իրականացնել հսկողություն սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ | մշտապես | ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ | |
| 39 | Իրավական դաստիարակության նպատակով աշակերտներին ծանոթացնել միջազգային կոնվենցիայով սահմանված <<Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր>> և այլ փաստաթղթերի հետ | Ուստարվա<br>ընթացքում | ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ , Դասղեկներ, Հասարակագիտ. ուսուցիչ | |
| 40 | Ծաղիկներ դնել անհայտ զինվորի, Ղարաբաղի անկախության, Հայաստանի սահմանների պաշտպանության համար և Հայրենական պատերազմում զոհված մարտիկների, ինչպես նաև Եղեռնի զոհերի հուշակոթողներին: | Տոնական և տարելիցի օրերին | ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ | |
| 41 | Կազմակերպել առցանց եղանակով ա/միջոցառումներ գիտաժողովներ, սեմինարներ, մեծարման երեկոներ, դաս- միջոցառումներ, ինտելեկտուալ խաղ- մրցույթներ<br>բ/ լույս ընծայել պատի թերթեր, պաստառներ, վահանակներ, ստեղծել տեսագրություններ,ալբոմներ, մեթոդական անկյուններ | ուստարվա ընթացքում | ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ ,դասղեկներ,դասվարներ | |
| 42 | **Հեռավար կամ առկա կազմակերպել**<br>ա/ ամիսը մեկ անգամ իրականացնել մասնագիտական կողմնորոշման սեմինար դպրոցում<br>բ/ տրամադրել աշակերտներին տեղեկատվական գրականություն<br>գ/ կիրառել համացանցային որոնողական համակարգեր դպրոցներում,<br>դ/ դեմ առ դեմ խորհրդատվություններ, խմբային խորհրդատվություններ,<br>ե/ տեսաֆիլմերի դիտում և քննարկում մասնագիտական կողմնորոշման մասնագետի հետ,<br>զ/էքսկուրսիաներ ձեռնարկություններ, հիմնարկություններ և ուսումնական հաստատություններ,<br>է/ հանդիպումներ մասնագետների հետ հատուկ հատկացված սեմինարների ընթացքում,<br>ը/ ԶԼՄ միջոցով մասնագիտությունների | ուստարվա ընթացքում | ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ ,դասղեկներ,դասվարներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ներկայացում: | | | |
| 43 | Կազմակերպել ազգային մշակութային ժառանգության պահպանման ու զարգացման ուղղությամբ առցանց միջոցառումներ, նպաստել հանրակրթության միջոցով ազգային փոքրամասնությունների համայնքների լեզվի և մշակույթի զարգացման իրավունքի իրականացմանը:<br><<Կայուն սկզբունքներ, հարուստ ավանդույթներ >> տարեգրություն՝ անցկացնել հեռավար եղանակով համադպրոցական միջոցառումներ՝ մասնակցությամբ մարզպետարան, համայնքապետարան, շրջանավարտներ,վաստակաշատ մանկավարժներ: | ուստարվա ընթացքում | ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ ,դասղեկներ,դասվարներ | |
| 44 | Կանոնավոր կերպով անցկացնել առավոտյան լիցքային վարժությունները,առողջարարական դասամիջոցները և մարմնամարզական րոպեները: | Ուստարվա ընթացքում | ԴԱԿ Ֆիզղեկ Դասղեկներ Զինղեկ | |
| 45 | **Ռազմահայրենասիրական աշխատանք**<br>1.Համակարգել դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության գործընթացը<br>2. Հստակեցնել դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության գործընթացի մեթոդները, ձևերն ու միջոցները<br>3. Բարձրացնել դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակության և նախազորակոչային պատրաստության խնդիրների լուծման մեթոդների, միջոցների ու ձևերի արդյունավետությունը<br>4. Կազմակերպել հեռավար ճանաչողական էքսկուրսիաներ դեպի պատմական վայրեր և հուշարձաններ /պատրաստել լուսանկարներ, նկարներ, տեսահոլովակներ և ցուցադրություններ կազմակերպել/<br>5. Այց՝ ՀՀ ԶՈւ, զորամասեր, մարտական փառքի վայրեր | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ Ֆիզղեկ | |

***Արթիկի հ.1 հիմնական դպրոցի սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի տարեկան պլան***




**2022-2023 ուստարի**